ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 08 >> 12 2014 թվականի N: 332-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 4-րդ կետի 4-րդ ենթակետի, 15-րդ և 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի նիստի թիվ 1 արձանագրությունը.

որոշում եմ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Կարինե Հարությունյանի լիազորությունները և նրա փոխարեն խորհրդի կազմում հաստատել Արթուր Սարգսյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> N 51-Ա որոշման N56 հավելվածում <<Հարությունյան Կարինե>> բառերը փոխարինել <<Սարգսյան Արթուր>> բառերով:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝